

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ



ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ-100. ՃԱՆԱԶՈՒՄԻՑ՝ ՀԱՏՈՒՑՈՒՄ
ARMENIAN GENOCIDE 100. FROM RECOGNITION TO REPARATION
ГЕНОЦИД АРМЯН - 100. ОТ ПРИЗНАНИЯ ДО КОМПЕНСАЦИИ



ՀՀ, Երևան 0019, Մարշալ Բաղրամյանի պ. 24/4
Marshal Baghramyan ave., 24/4, 0019, Yerevan, Republic of Armenia
0019 Ереван, Республика Армения, пр. Маршала Баграмяна 24/4

ՀՀ, Երևան 0025, Ալեք Մանուկյան 1
Al. Manooagian, 0025, Yerevan, Republic of Armenia
0025 Ереван, Республика Армения, Ал. Манукиана 1

Հեռ./Tel./Тел. +374 93 58 78 09, +374 10 58 33 82
+374 60 71 00 92

Էլ. փոստ/E-mail: info@orient.sci.am, info@armin.am

2015 թ. հոկտեմբերի 15-16-ը տեղի կունենա Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված «Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հատուցում» միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի կազմակերպիչներն են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Երևանի պետական համալսարանը:

Գիտաժողովում նախատեսվում է հետևյալ հիմնախնդիրների քննարկումը՝

- Հայոց ցեղասպանություն. պատմություն, տեսություն, հիշողություն, աշխարհաքաղաքականություն,
- Ցեղասպանության հետևանքների վերացման և հատուցման իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները,
- Հայոց ցեղասպանության արտացոլումը գրականության մեջ և արվեստում,
- Մշակութային ցեղասպանություն՝ «Սպիտակ Եղեռն»:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը, ռուսերենը, անգլերենը:
Խնդրում ենք Ձեր մասնակցության վերաբերյալ հայտը **մինչև 2015 թ. հուլիսի 1-ը** ուղարկել վերոնշյալ հասցեներով:

Կից՝ մասնակցության հայտն ու պայմանները:

Հարգելի՛ մասնակից,

Զեկուցման **հիմնադրույթները** պետք է ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեներով՝ info@armin.am , info@orient.sci.am: Ներկայացնելու վերջին ժամկետը՝ **2015 թ. հուլիսի 1-ն է:**

Չափորոշիչներն են՝

- Համակարգը՝ Microsoft Word, A4 չափի, 3 էջից ոչ ավելի (եթե հիմնադրույթները հայերեն են, ապա ամփոփումները պետք է լինեն ռուսերենով և անգլերենով, եթե ռուսերեն՝ հայերենով և անգլերենով, և եթե անգլերեն՝ հայերենով, ռուսերենով /յուրաքանչյուրը՝ մինչև 15 տող՝ ներառյալ հեղինակի անունը, ազգանունը, զեկուցման խորագիրը/):
- Տեքստի տառատեսակը՝ Sylfaen (հայերեն), Times New Roman (ռուսերեն և անգլերեն):
- Տառերի չափը՝ 12 (հղումների համար՝ 9), հղումները՝ սողատակում, հերթական համարակալմամբ:
- Ներկայացվող նյութերում պետք է պահպանված լինի հետևյալ հերթականությունը՝

ա) հեղինակի անունը, ազգանունը, երկիրը (փակագծում),

բ) խորագիրը,

գ) տեքստը,

դ) ամփոփումը:

Զեկուցման տևողությունը՝ մինչև 15 րոպե:

Գիտաժողովի կազմկումիտեն իրավասու է մերժելու այն զեկուցումները, որոնք արդեն հրատարակվել են:

Գիտաժողովի կազմկումիտե